Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ 2026-2027 ՈՒՍՏԱՐԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

021201.03.6 «ՀԱԳՈՒՍՏԻ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄ»

«Հագուստի մոդելավորում» բաժնի շրջանավարտները ստանում են հագուստի մոդելավորման բակալավրի որակավորում:

Ուսման տևողությունը չորս տարի է: «Հագուստի մոդելավորում» բաժին կարող են ընդունվել նրանք, ովքեր ունեն ընդհանուր միջնակարգ կրթություն, նկարչական ունակություններ ու հմտություններ, որոնք համապատասխանում են քննությունների պահանջին:

Դիմորդը պետք է հանձնի մասնագիտությունից երկու քննություն՝ «Գծանկար» և «Կոմպոզիցիա»:

«ԳԾԱՆԿԱՐ» ԱՌԱՐԿԱՅԻ ՔՆՆՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

«Գծանկար» առարկայի քննության ժամանակ հանձնարարվում է հետևյալ առաջադրանքը՝

✓ Նատյուրմորտ հարթ ֆոնի վրա 2-3 գիպսե առարկաներից՝ գրաֆիտե մատիտով պարզ լուսավորությամբ:

Բնօրինակի ճիշտ տեղադրում թղթի վրա, համաչափությունների ճշգրիտ արտահայտում, տրված լուսավորության պայմաններում արտահայտել ծավալները և տալ բնօրինակի նմանության բնութագիրը:

Նյութը՝ գրաֆիտե սև մատիտներ՝չոր, միջին և փափուկԹուղթը՝ 60x40 սմ չափի

Կատարման տևողությունը՝ 8 ակադեմիական ժամ (2 օր՝ չորսական ժամ)

«ԿՈՄՊՈԶԻՑԻԱ» ԱՌԱՐԿԱՅԻ ՔՆՆՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Առաջադրանքի ճիշտ տեղադրումը թղթի վրա, առաջադրանքը կազմող մասնիկների չափի, գույնի ներդաշնակության խնդիրները և ոճավորման արտահայտումը:

«Կոմպոզիցիա» առարկայի քննության ժամանակ հանձնարարվում է հետևյալ առաջադրանքը.

✓ Կատարել բազմաֆիգուր կոմպոզիցիա (առաջարկվող թեմաների տարբերակներով):

Նյութը՝ տուշ, գուաշ, մատիտներ, գրիչներ, պաստել, ջրաներկ

Թուղթը՝ 60Х40 սմ չափի

Կատարման տևողությունը 4 ակադեմիական ժամ 1 օրում

ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Քննություններն անցկացվում են 3 օրվա ընթացքում (2 օր՝ գծանկար, 1 օր՝ կոմպոզիցիա):

Քննության ներկայանալիս դիմորդը իր հետ պետք է ունենա.

1. Նկարչական տախտակ 60x40 սմ չափի թղթի համար
2. Նկարչական 60x40սմ չափի 2 թերթ (գծանկարի և կոմպոզիցիայի համար)
3. Գրաֆիտե սև մատիտներ՝ չոր, միջին և փափուկ տեսակների
4. Ռետին, սրիչ, կոճգամներ, ծայրեր
5. Տուշ, գուաշ, գունավոր մատիտներ, գրիչներ, պաստել, վրձիններ (տարբեր չափերի), փորձաթղթեր, ապակյա ջրամաններ (նկարչական նյութերը ըստ դիմորդի ընտրության)

021201.03.6 «ՀԱԳՈՒՍՏԻ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

«ԳԾԱՆԿԱՐ»

1.	Թղթի մեջ առաջադրանքի ճիշտ տեղադրում և չափի որոշում	0-5 միավոր
2.	Առաջադրանքի կազմող առարկաների և նրանց մասնիկների համաչափությունների արտահայտում:	0-5 միավոր
3.	Աշխատանքում լուսաստվերային, ծավալային խնդիրների և հեռանկարի արտահայտում	0-5 միավոր
4.	Առաջադրանքը կազմող առարկաների նյութականության արտահայտումը և գրաֆիկական կատարողական կուլտուրան:	0-5 միավոր
		Ընդամենը 20 միավոր

«ԿՈՄՊՈԶԻՑԻԱ»

1.	Առաջադրանքի ճիշտ տեղադրումը թղթի վրա	0-5 միավոր
2.	Առաջադրանքը կազմող մասնիկների չափերի ճիշտ փոխհարաբերություն և ծավալների արտահայտում	0-5 միավոր
3.	Ռիթմի, դինամիկայի և ստատիկայի ճիշտ կառուցում	0-5 միավոր
4.	Կատարողական գրաֆիկական կուլտուրան և նյութի հետ վարվելու վարպետությունը	0-5 միավոր
		Ընդամենը՝ 20 միավոր

021201.03.6 «ՀԱԳՈՒՍՏԻ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1-ին քննություն - «Գծանկար»

2-րդ քննություն - «Կոմպոզիցիա»

Երկու քննությունների ընթացակարգերը նույնատիպ են: Քննությունները անցկացվում են. Գծանկար՝ երկու օրում 4-ական ակադեմիական ժամ տևողությամբ, կոմպոզիցիա՝ մեկ օրում 4 ակադեմիական ժամ տևողությամբ:

Տվյալ օրվա քննության բոլոր դիմորդները քննասենյակներում իրենց նստատեղերը զբաղեցնում են վիճակահանությամբ:

Երկրորդ օրվա քննության ավարտից հետո բոլոր աշխատանքները հավաքվում են, ծածկագրվում պատասխանատու քարտուղարի կողմից և հանձնվում առարկայական քննական հանձնաժողովի նախագահին գնահատման համար:

Գնահատման ավարտից հետո կատարվում է աշխատանքների ապածածկագրում և գնահատականները փոխանցվում են քննական ամփոփաթերթի մեջ: